



9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԷՔՍԵՆՈՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2024

ՖԻԶԻԿԱ

ԹԵՍՏ 1

ՔՆՆԱՍԵՆՑԱԿԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Սիրելի՛ աշակերտ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքը: Եթե չի հաջողվում որևէ
առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող
ես այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:
Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

Ցանկանում ենք հաջողություն:

1

Ինչի՞ հունարեն անվանումից է առաջացել «Էլեկտրոն» բառը:

- 1) ապակու
- 2) Էբոնիտի
- 3) սաթի
- 4) բրդի

2

Ո՞ր գիտնականի անունով է կոչվում Էլեկտրական լիցքի չափման միավորը:

- 1) Նյուտոնի
- 2) Կուլոնի
- 3) Ուատտի
- 4) Ջոուլի

3

Արժեքներից ո՞րը չի կարող ընդունել մարմնի լիցքի և տարրական լիցքի հարաբերությունը:

- 1) 1
- 2) 1,5
- 3) 2
- 4) -2

4

Պնդումներից ո՞րն է ճիշտ:

Էլեկտրական հոսանք կոչվում է.

- 1) ատոմների ուղղորդված շարժումը:
- 2) Էլեկտրոնների քառասյին շարժումը:
- 3) լիցքավորված մասնիկների շարժումը:
- 4) լիցքավորված մասնիկների ուղղորդված շարժումը:

5

Մասնիկներից որո՞նք են հանդիսանում Էլեկտրական հոսանքի կրողները մետաղներում:

- 1) Էլեկտրոնները
- 2) դրական իոնները
- 3) բացասական իոնները
- 4) դրական և բացասական իոնները

6

Ինչպե՞ս կփոփոխվի մետաղի էլեկտրական դիմադրությունը, եթե նրա երկարությունը փոքրացնեն 2 անգամ:

- 1) կփոքրանա 2 անգամ
- 2) կփոքրանա 4 անգամ
- 3) կմեծանա 2 անգամ
- 4) կմեծանա 4 անգամ

7


Ինչպե՞ս կփոփոխվի մետաղալարի դիմադրությունը, եթե հոսանքի ուժը մեծացնեն 4 անգամ:

- 1) կմեծանա 2 անգամ
- 2) կմեծանա 4 անգամ
- 3) կփոքրանա 4 անգամ
- 4) չի փոփոխվի

8

Որքա՞ն է նկարում պատկերված էլեկտրական շղթայի տեղամասի ընդհանուր դիմադրությունը:

- 1) 1,5 Օմ
- 2) 3 Օմ
- 3) 4 Օմ
- 4) 8 Օմ



9

Արտահայտություններից ո՞րն է ճիշտ էլեկտրական հոսանքի աշխատանքը հաշվելու համար:

- 1) IUt
- 2) I^2Rt
- 3) U^2t/R
- 4) բոլորը

10

Ինչպե՞ս են փոխազդում իրար հետ հաստատուն մագնիսների նույնանուն բևեռները:

- 1) ձգում են
- 2) վանում են
- 3) կարող են ձգել կամ վանել
- 4) չեն փոխազդում

11


Ի՞նչ պետք է անել հոսանքակիր կոճի մագնիսական դաշտը ուժեղացնելու համար:

- 1) մեծացնել հոսանքի ուժը
- 2) փոքրացնել հոսանքի ուժը
- 3) փոխել հոսանքի ուղղությունը
- 4) կոճը պահել ուղղաձիգ դիրքում

12

Ի՞նչ նյութից է պատրաստված նկարում պատկերված թելից կախված կշռաքարը, եթե այն ձգվում է հաստատուն մագնիսի կողմից:

- 1) ապակուց
- 2) ալյումինից
- 3) պողպատից
- 4) պլաստմասսայից



13

Երևույթներից ո՞րը չի բացատրվում լույսի ուղղազիծ տարածմամբ:

- 1) Լուսնի խավարումը
- 2) ստվերի առաջացումը
- 3) Արեգակի խավարումը
- 4) ծիածանի առաջացումը

14

Ի՞նչ են անվանում խորդուբորդ մակերևույթից լույսի անդրադարձմանը:

- 1) ցրիվ
- 2) հայելային
- 3) խորդուբորդ
- 4) անդրադարձային

15

Որքա՞ն է ճառագայթի անդրադարձման անկյունը, եթե միջավայրերի սահմանին ընկնող ճառագայթի անկման անկյունը 50° է:

- 1) 5°
- 2) 25°
- 3) 50°
- 4) 100°

16

Մարդը 2 մ/վ արագությամբ հեռանում է հարթ հայելուց: Հայելու նկատմամբ ի՞նչ արագությամբ է շարժվում մարդու պատկերը:

- 1) 0
- 2) 1 մ/վ
- 3) 2 մ/վ
- 4) 4 մ/վ

17

Ի՞նչն են անվանում բարակ ոսպնյակի օպտիկական առանցք:

- 1) ոսպնյակի կենտրոնի անցնող գիծը
- 2) կիզակետում կանգնեցրած ուղղահայացը
- 3) ոսպնյակի և կիզակետի միջնակետով անցնող գիծը
- 4) ոսպնյակի գնդային մակերևույթների կենտրոնները միացնող գիծը

18

Ի՞նչ ատոմներից է կազմված պատկերված ջրի մոլեկուլը:

- 1) թթվածին 2 և ջրածնի 1
- 2) ջրածնի 2 և թթվածնի 1
- 3) ջրածնի 2 և թթվածնի 2
- 4) ածխածնի 2 և թթվածնի 1

19

Ի՞նչ լիցք ունի նեյտրոնը:

- 1) դրական
- 2) բացասական
- 3) լիցք չունի
- 4) կարող է ունենալ դրական կամ բացասական լիցք

20

Որքա՞ն է միջուկում նեյտրոնների թիվը (A -ը միջուկի զանգվածային թիվն է, Z -ը՝ պրոտոնների թիվը):

- 1) $A + Z$
- 2) $A - Z$
- 3) $\frac{A}{Z}$
- 4) $A \cdot Z$